

սաւ թէ՛ թագաւորը իրենց հանդէպ մեծ սէր ունի, եւ իրենց մեծ շնորհներ կ'ընէ, սակայն վտանգաւոր բան է անոր հետ կատակել, եւ ատոր ապացոյց է իր եղբօր պատահած շատ տըխուր պատահարը: Եստ յարգուած ըլլալով արքունեաց մէջ, իր ազատ, զուարթ եւ հաճոյալի խօսակցութեանց համար, օր մը թագաւորը կ'ըսէ իրեն, թէ ոչինչ կը ցանկար բացի անոր միւսլիման կրօնքի դառնալէն, եւ իրեն աւելի մեծ հաճոյք մը չէր կրնար պատճառել քան թէ թլփատութեան ենթարկուիլ: Ատոր՝ էլիսազ Պէկ կը պատասխանէ ժպտելով, թէ ատիկա օր մը չէ օր մը կրնայ պատահիլ, խնդրելով Նորին Բարձրութենէն, որ այլեւս ատոր նման լուրջ բաներու մասին չխօսի, այլ շարունակէ իր զուարճութիւնը: Երկար ատեն այդ մասին իրեն ոչինչ կ'ըսուի, սակայն ժամագործին յամառութեան առթիւ թագաւորը իրենց (էլիսազ Պէկին) լուր կը զրկէ, որ ինքը պէտք է յիշէ թլփատութեան համար տուած իր խոստումը: Ան (էլիսազ Պէկ) ինքզինքը կ'արդարացնէ ըսելով թէ՛ իր ըսածը կատակ էր: Սակայն, անոնք որ իրեն զրկուած էին թագաւորէն, կարելի չէր ճամբել այդ պատասխանով, անոնք զինքը կը տանին եւ բռնութեամբ կը թլփատեն: Էլիսազ Պէկ հաստատեց ինչ որ իր երեց եղբայրը մեզի ըսած էր, սակայն բողոքով վստահացուց թէ ինք այսուհանդերձ իր հողիով Քրիստոնեայ էր, եւ թէ ինք պիտի մեռնի այդ կրօնական իր հաւատքին մէջ»: (49)

Որոչ կ'երեւայ թէ Սարֆրազ, մանաւանդ էլիսազ Պէկ կենցաղասէր, համարձակ եւ իրապէս սիրելի անհատներ էին, որոնց տան կարգն ու սարքը, արդարեւ, մեծատունի շէնքայութեամբ եւ ճոխութեամբ նշանաւոր էր: Սակայն, ինչ որ աւելի իմ ուշադրութիւնս կը զբաւէ անոնց երաժշտութիւն եւ նկարչութիւն սիրելն է: Թողմաս շէրպէրդ ինչպէս տեսանք կը վկայէ, որ 1627-ին ղեռն Սօջայ Նազարին տան մէջ կային որմանկարներ, սակայն անոնց նիւթը զինքը խրտչեցուցած ըլլալով, կը բաւականանայ զանոնք այսպանելի

զտնելով, առանց մանրամասնութիւններ տալու անոնց վրայէն անցնիլ:

* * *

Ատամ Օլարիուս, աւելի կենցաղասէր, տասը տարի վերջ կ'այցելէ Սօջայ Սարֆրազի տունը: Սօջայ Նազար արդէն տարի մը կ'ընէ մեռած է: Օլարիուս իր նկարագրութեան մէջ չի մոռնար յիշել, որ Սօջայ Սարֆրազի տան որմանկարները կը ներկայացնէին «աշխարհի ազդերուն մեծ մասին կիները, հազնըւած իրենց յատուկ երկրին ճաշակով»: Այս որմանկարները ըլլալու են արդիւնքը Դաւրիթեցի յիշած մեծանուն Ջուզայեցի վարպետ Մինասին: Այս մասին կը զրէ:

«Եւ վասն կարի առաւել վայելչակերտ գեղեցկատիւ շքնադատես յօրինուածոյ արուեստին, (վարպետ Մինասի), մեծամեծքն Ջուզայեցւոց տանէին ի ծաղկել եւ ի պատկերագրել զյարկս ապարանից եւ տանց իւրեանց. այսպէս եւ Սօջայ Նազարի որդի Սօջայ Սարֆրազն տարեալ ի տուն իւր առ ի զարդարել զապարանս իւր ծաղիօք եւ պատկերօք: Եւ մինչ տակաւին ոչ էր աւարտեալ զտունսն ի ծաղկելոյն, պատահեցաւ զի թագաւորն Պարսից Եսհ Սէֆի եկն ի տուն Սօջայ Սարֆրազին, որոյ նստելով իրրեւ գննեալ հայ էր ի ծաղիկս եւ ի պատկերս՝ զոր նկարեալ կայր տեսանէր զի շքնազ եւ գեղապանձ եւ յոյժ նմանակի կերպագրեալք են ամենեքեան. սկսաւ հարցանել թագաւորն ի Սօջայ Սարֆրազէն վասն նկարիչ վարպետին, թէ ուստի իցէ, եւ նա ասաց ի մերմէ ժողովրդեանէս եւ ի Հայոց ազգէս, եւ ահաւասիկ այժմ յայն իմն տան ի գործի կայ, զոր եւ հրամայեաց թագաւորն կոչել զնա. եւ իրրեւ եկն՝ հարցեալ թագաւորն տեղեկացաւ ամենայն որպիսութեանցըն»: (50)

1637-ին կամ յաջորդ 1638 տարւոյն մէջ

(50) «Պատ. Դաւրիթեցւոյ», էջ 410: Վարպետ Մինասի մասին տե՛ս իմ մանրակրկիտ ուսումնասիրութիւնս «Հայրենիք» ամսագրին մէջ, գեկտեմբեր 1939, յունուար եւ մարտ 1940, «Նոր Ջուզայու Ամենափրկչեան վանքին կեղեցւոյ որմանկարները»:

(49) Անդ՝ էջ 287-288: